ԱԼԱՒՆ

ՀԱՆԴԷՍ ՏԱՊԱՆՕՐԵՑԻ

Կը հրատարակուի ամեն ամսոյ 10ին, 20ին և վերջին։ Սարգսբրօնեան պեղերն են՝
Կ—պօլիս. Ընդհանրական Ընդհրատարակութեան Ընդհրատարանը. Մեծ դարանի վերի դռան թիւ 6. Ջմիռնիա. Հայկական Ընդհրատարանի գրասենեակը։

Տարեկան գինն է 100 դրուշ։
Վեցամսեայ » 60 »
Մեկ ամսուն » 4 »
Ոչ մի թիւն առանձին չի նայ սպառելիք։
Դուրսը երեսփոխ հրապարակ ճամբան ծախքը առնողին վրայ է։

Ծանուցումը մէկ անգամ համար պղպէն 100 ֆր
» երեք » 80 »
» երեք » 60 »
Մեծ, պարբերաբար և խոշոր գիրերով եղած ծանուցումներու ուրիշ սակարկութիւն։

ՄԱՐՏ 30 Ե. ՏԱՐԻ 1861 ԹԻՒ 129

ԱԶԳԱՑԻՆ ՊԱՐՏՔԻՆ ՎՃԱՐՈՒՄԸ

Ուրախ սրտով կը հաղորդենք մեր ընթերցողներուն հետեւեալ նամակը Ազգային պարտուց վճարման վրայօք, և պետք եղած դիտողութիւնները ետքէն կ'աւելցնենք անոր։

"Պ. Խմբագիր.

»Այս ամսին 27 ին երկուշաբթի օրը մեծ Նոր—խանին վերի յարկը՝ սեղանաւորաց պետ (սարրաֆլար բէհեասի) Պ. Մկրտիչ Խաչատուրեանի սենեակին մօտերը եղած սենեակի մը ակռայը հետ երկար հաշիւ մը ունենալով, առաւօտեան մինչեւ երկուն հոն կեցնալ հարկ եղաւ ինծի. ուստի շատ անգամ օգ առնելու համար սենեակին դուրս ելլելով տեսայ որ անդադար՝ Հայեր կու գային կը մտնէին վերոյիշեալ անձին սենեակը. հարցէն իմացայ թէ ազգային հին պարտքերուն համար նոսէր մ'ընդունու կու գան այս անձինքը։

»Ասկից զատ թէ ամենքն ալ ամսապարանոց հոն կը դիմէին. ուրիշ և շատերը հոն կը վազէին. առաջարկելու գումարէն էւել տալու համար կը յորդորէին. ոմանք ալ ինքնահաւանութեամբ կու գային։ Տեսնողը մեկէն պիտի կարծէր թէ այս անձերը ճոխութեան մէջ ուռչացած՝ չհայրաբար վատնելու կու գային իրենց հարստութեան մէկ աւելորդը, կամ այն գումարը, որ Պօլսոյ մէջ անգիւտ կերպով բռնաւոր մէկ զուարճութիւնուն յատկացուցած կ'ին։

»Ետքէ համոզուած ջլլայինք թէ այսօր Պօլսոյ մէջ գտնուող մարդոց կէս հարստահէն էն ազգասէր ամենն ալ անհնարին նեղութեան մէջ են ուտելի կողմանէ՝ անշուշտ պիտի հաւատայինք անոր։ բայց որովհետեւ գիտենք թէ հիմա բնաւ մեկը կարօղութիւն չ'ունի ստակ մը տալու առանց զանի իր հարցապնդելու իրեն, կը զարմանանք այն անձանց վրայ, որ այսօր կը փութան ազգային հին պարտքը վերցնելու համար ստակ վճարելու. որով և կը համոզուինք թէ իրանց Հայերուն մէջ ազգասիրութիւնը ծանօթը է, իրանց համոզուած են Հայերը թէ իրենց ուժը Ազգին է և Ազգին ուժը իրենցմէ է, և թէ Ազգին պարտքը ամեն անհատներու է։

»Ետքէ այսչափ դարերու, այնպիսի խառնաշփոթ ժամանակներու մէջ, ուր այնչափ ազգեր, այնչափ ժողովուրդներ կորսուեր են և որոնց հետքն անգամ կարելի չէ նշմարել այսօր, Հայը ապրած է միշտ թէ և իր ժամանակին համեմատ անշարժ, միթէ հնարին է մտածել թէ Հայը պիտի կեցնայ գործելէ անշարժ և անզգայ։ Երբ այն ժամանակները անցեր են և այսօր ամեն ազգ իր խառնաշփոթութեան դարուն մէջ է, և իր արդի ապրուստ ստանալ օգնելու տկարացած մարմինը զօրացնելու համար ազատ և մաքուր օդ մը շնչելու կը փութայ . . . . . ուշ. չ'ենք ուզեր այսպիսի յուսահատ և անպատեհաբար կարծիք մը կամ կռահում մը ունենալ մեր Ազգին վրայ. այլ կը յուսանք և կը հաւատանք թէ Հայը ինքը պինդ արժանի ազգ մը պիտի ընէ իր ապրած դարուն անոր ոգուն համեմատ ապրելով. և երբ օտար ազգերը կը կարծեն թէ Հայը տակաւին Սինջին դարու մէջ կապրի, պիտի ցուցնէ նա

թէ ինք ալ ԺԹ՞ դարու ժողովուրդ մը կոչ-
վելու արժանի է, և թէ անասելիք չէ Ե-
րոպայի քաղաքակրթութեանն ու ազգայնու-
թիւններուն յարգալ լուսաւորեալ գաղափար-
ներուն։ Հայը ճանչցեց քիչ մը՝ և փչալի ա-
ռաջ երթայ աւելի ալէկ պիտի ճանչնէ այն
գաղափարը և անոր հետեւանքը, և անանց
դարձագրութիւնը պիտի ջանայ։ Հայը ճան-
չցեր թէ իր մէջ ցրված ու թմրութեան մէջ
պահված ղօրութիւններն՝ ի մի ձուլող և ամ-
փոփող ազգային Կեդրոնական ղօրութիւն մը
պէտք է՝ կարող ամէն պաշտպանողական և՝ ի
հարկին յարձակողական կերպերն առնելու։

» Այս Կեդրոնական ղօրութիւնը, որ Ազ-
գային Վարչութիւն ըսվեցաւ, Հայերուն
յոյսն ու վստահութիւնը ջլպիսի խաբէ եր-
ըեք՝ եթէ անոնք ալ իրենցմէ պահանջված
օգնութիւնը չըլլային անկէ։ Հայերը իրենց
Ազգային Վարչութեան վրայ ծանր պարտքեր
և մեծ պատասխանատուութիւն դրած ատեն՝
չըդանգաղեցան անոր իրաւամբ պահանջած
օգնութիւնն ալ տալու։ Ազգային Վարչու-
թիւնը մէկ կողմէն՝ ժողովուրդը միւս կողմ-
մէն, երկուքը ընկերացան այսօր Ազգն առաջ
տանելու աշխատութեան համար։ Երկուքը
ընկերութիւն մը կազմեցին այսօր, որոնց ա-
ռաջինին դրամագլուխն է աշխատութիւնը,
երկրորդինը՝ նիւթական պիտոյքին հայթայ-
թանքը։ Ազգային Վարչութիւնը պիտի աշխա-
տի, Ազգը անոր աշխատութեան հարկաւոր ե-
ղած նիւթերը պիտի մատակարարէ։ Ազգային
Վարչութիւնը սկսաւ աշխատիլ, ժողովուրդն
ալ ահա կը փութայ այսօր անոր նիւթ մատա-
կարարելու։ Ինոր պէտք եղածը՝ նա մտնա-
ւանդ գործառնութեանցն արդիւք եղած
նիւթը տակն էր։ և այս տակը ոչ միայն
կարեւոր էր այսուհետեւ գործելիքին, այլ
և ամէ առաջ Ազգին անորոշ և թշուառ
վիճակին մէջ ինքնըստինքը ազգասիրութիւն ան-
հոգ և փառասիրութեամբ ու շահասիրու-
թեամբ միայն շարժիլ մատակարարութեան
արտադրած պարտքերն ալ վճարելու համար։
Վասն զի քանի որ այն պարտքերը այնպէս
դիպված մնայեր են և քանի որ օր օրի աւելի
կը մեծնայ անոնց գումարը տակաւ վասն
հեծնելով՝ անհնար է և էր որ Ազգային
Վարչութիւնը ձեռնհաս ըլլայ գործ մը կա-
տարելու։

» Այսօր հաշուվեցան Հայերը և ահա այ-
սօր հաշիւը կը փութան մանաւանդ նուէրը
ներով այս ծանրութիւնը վերցնելու Ազգա-
յին Վարչութեան վրայէն։ Ահ, պ. խմբա-
գիր, մեծ յոյս տուին ինծի այսօր Հայերը։
ազգային պարտք վճարելու կը փութան. տակ
ազգայնոց երկու մեծ համազումը կը ցուցնէ։
Համազումներ, առանց որոնց ոչ ինչ կարող
չենք ընել Ազգային յառաջդիմութեան մա-
սին. համազումներ, որ եթէ ամէն քանի մը
տարի առաջ ունեցած ըլլային Հայք՝ շատ
առաջ պիտի երթայր Ազգը։ Համազումներ ենք
նախ՝ թէ ամէն անհատ պաշտպան են ազ-
գային ծախքերուն հոգալու համար տարի մը
կամ անձնական նուէր մը հատուցանել Ազ-
գին. երկրորդ՝ թէ Ազգային Վարչութիւնը
ոչ ինչ չըկրնար ընել՝ եթէ ժողովուրդը չ'օգ-
նէ անոր։

» Այս երկու համազումները մեծ համա-
րում կը բերեն Հայոց իրենց վրայ. ուստի
ուրախ ենք խորհրդածելով թէ Հայերն ի-
րենց այս համազումներով շատ մեծ ղօրու-
թիւն պիտի տան Ազգային Վարչութեան
ձեռքը, հետեւաբար մեծ պատասխանա-
տուութեան ներքեւ պիտի դնեն զանի. ու-
րախ ենք տեսնելով՝ ազգային պարտք վճա-
րելու փութացող անձանց վրայ փայլած ու-
րախութիւնը, որ յայտնի նշան մը կը համոր-
վեր իրենց սրտին սա զգացմանցը, թէ այն
գումարով որ կու գային այսօր ազգին դանձը
պարպելու, այն գումարով կարող պիտի ըլ-
լան Ազգին համար գեղեցիկ ապագայ մը
գնելու. ապագայ մը լաւագոյն վիճակով քան
որ ունի հիմա Ազգը։

» Երանի՛ այն Հայերուն, որոնցմով Ազ-
գին ապագայ սերմնդը պիտի պարծի և ու-
րոնց օրինակին հետեւելու համար նախանձ
մը պիտի զգայ իր ներսը, և այն նախանձով
մեզնէ աւելի մեծ գործեր պիտի ընէ Ազգին
համար։

» Արդկային ազգը միշտ յառաջ երթա-
լու վրայ է և գաղափարաբեալ է. յառաջդի-
մութեան թշնամիք այս երանելի գաղափար-
ութեան ներքեւ ըմնել չ'ուզեն նէ՝ յա-
ռաջդիմողներուն տարին ներքեւ պիտի ըմնին
և՝ ի տարտ պիտի կորսըվին։ Հայը՝ ջուզեց
այն գաղափարութենէն ազատ մնալ. ուս-
տի իր բոլոր ուժովը կը ջանայ այսօր յառաջ
դիմութեան շաւղին հետեւիլ։ Այս օրէն
ուրեմն վստահ կրնանք ըլլալ թէ Հայն ալ
պիտի տարի մարդկային ազգի գեղեցիկ ա-
պագան տեսնելու։ Կաղաքակրթութիւնը՝
Աւետարանական պատերէն հաղարապատիկ ամուր
արգելքներն ալ տանակոս պիտի ընէ անցնի
և պիտի յաջողի ամէն կողմի ժողովուրդց սիրտն
ալ իրեն յանկուցանելու և զինքն տասղ ժո-

ղովուրդին բոլորտիքն եղած ցանկը քակելով այն ժողովուրդը մարդոց ոտքին կոխան ընելու։ Ազգը իր դռները վաղուց բացած էր քաղաքակրթութեան և պատրաստ զանի ընդունելու. բայց դժբաղդաբար մինչեւ ցարդ զանի ընդունելու կերպը չգիտնալով, և միշտ մանաւոր անձանց հաճոյ երեւցած եղանակովը ժողովուրդը խառն խառն բաժնված այլ և այլ եղանակներով զանի ընդունել ուզելով՝ մինչեւ այսօր ալ անկէ հիմնական օգուտ մը քաղած չ'ունէր. հիմա Ազգը իր ղօրութիւնը իր կարծիքները՝ Ազգային Վարչութեան ձեռքը տուած՝ անոր կը յանձնէ արժանաւոր և օգտաբեր ընդունելութիւնն ընել քաղաքակրթութեան, որ ան ալ արդիւնաւոր ըլլայ։ Այս օրէն ուրեմն կրնանք հասկնալ թէ Ազգը քաղաքակրթութեան մասին ալ հիմնական յառաջդիմութիւն պիտի ընէ։

»Այո, Պ. Խմբագիր, երբ կերեւայ թէ ժողովուրդը հասկցած է Ազգն ինչ է, Ազգայնութիւնն ինչ է, անհատի մը առ Ազգն ունեցած պարտականութիւնները ինչ են, ալ այնուհետեւ մեծ յոյս կայ Ազգային յառաջդիմութեան. և որովհետեւ պայծառ կը տեսնենք այսօր թէ ժողովուրդը սկսած է այս հասկացողութեան, ուրեմն վստահ ենք ըսելու թէ Ազգն այսօր հաստատ կերպով կատարելոց իր առաջին քայլափոխը՝ քաղաքակրթութեան շաւղին մէջ. քայլափոխ մը որ շատ մեծ է և եթէ ընելիք քայլափոխներուն հաղորը կ'արժէ. քայլափոխ մը որ ոչ թէ ակամայ կամ յանգէտս և կամ անդիմադրելի զօրութեան մը ներգործութեամբն եղած է, այլ հաստատ համոզմամբ և փափաքանօք։

»Յոյս ունինք որ այս ընթացքով մօտերս ազգային հին պարագրերը ամբողջ կը վճարվին և Ազգային Վարչութիւնը քիչ առնէն հետեւտես ջղահայեցութեամբ կ'սկսի Ազգին առաջնորդութիւն ընել անսայթաք քալելը նելով զանի։

»Երթան սրտալ ծանուցանելով ձեզ իմ այս յոյս, կը խնդրեմ որ դուք ալ ձեր ընթերցողաց հաղորդէք ի մեծ ուրախութիւն անոնց ալ սրտին։

Ա՛նամ, Լայն . . . . . .

* * *

Նամակագրին ուրախութեան բաժնորդ ըլլալուս հետ կը յայտնենք միանգամայն թէ մեր յոյսը ազգային յառաջդիմութեան հաստատութեան վրայ այնչափ ապահով չէ որչափ իրը. վասն զի պէտք է խոստովանիլ և ցաւօք սրտի զգուշել թէ Ազգասէր Հայեր տակաւին մեր մէջ կարի տակաւ են. և հետեւաբար իրենց ազդեցութիւնն ալ շատ փոքր բան է չափելով այն ազդեցութեան հետ, որ ունի հին խելքերով ազգ կառավարել ուզող և այն անձանց հաւատացող միամիտ մտորդերուս բազմութիւնը։ Մէկ շատ անգամ կ'ըսվի թէ Հայերը մէկ ալրտ մէկ հոգի այս կամ այն կամ ազգօգուտ գործն ըսին՝ պէտք է գիտնալ թէ անոնց թիւը ազգային Երեսփոխանաց Ժողովին չափ ալ չէ. ուր միայ որ նոյն իսկ Ազգային Ընդհանուր Ժողովի մէջ ալ կան այնպիսի անձինք, որոնք կամ անհամակացողութեամբ կամ ուրիշ որ և է նկատմունքով Ազգային բարւոյ անօրէնութեան մը դէմ կը յառնեն շատ անգամ. միամիտ հաւատարակութիւնը տակաւին չէ համոզված թէ Ազգը կառավարելը ոչ հարուստին գործն է, ոչ շատ տարիներէ ի վեր ազգային գործոց մէջ դանըվողին և ոչ մտերն ի Պատրիարքարան ձեռնկցնողին. նա չէ հասկցած տակաւին թէ հանճար պէտք է, քաղաքագիտութիւն և հեռատես քաղաքագիտութիւն ազգ կառավարելու համար. և թէ մարդս շատ հարուստ ըլլալով ալ կրնայ միանգամայն անգէտ և անկարող ըլլալ մինչեւ անգամ իր տանը կառավարութեան կերպին։ Աւստի այնպիսի անձանց վրայ ըրած է իր ընարութեան մէկ մասը, որոնք կամ իրենց ոտիտութեամբ կամ սխալ կարծիքով և կամ թիւր ու վատթար մտածութեամբ իրենք ազգօգուտ գործ մը չէին ըներ, և որոնք ընելու կամք, փափաք ու կարողութիւն ունին՝ անոնց ալ արգելք կ'ըլլան։

Այս ամենը տեսանք Ազգային Ընդհանուր ժողովի անգամոց վրայ, բարեբաղդաբար փոքրագոյն մասին. տեսանք նաեւ անոնց մէջ այնպիսիներ ալ, որ իրենց փառքը տեսնելու համար (՞) իրենց պատիւը չվնասելու համար, ազգին փառացն ու պատուոյն չանհոգեցուին . . . . . ;

Տանք տեսնելով ինչպես ըսինք վերը, չենք կրնար հաւատալ այս մ' ունենալ թէ այսուհետեւ Ազգը ուղիղ և արագ ընթացքով մը պիտի դիմէ դէպ ի իր վախճանը. և եթէ ունենանք եւս, դանե շատ ուշ պիտի տեսնենք այն երջանիկ օրը, ուր Հայ ազգն ալ ուրիշ քաղաքակրթեալ ազգերու պէս հաստատ քայլով պիտի յառաջ գնայ միշտ։

Մեզ Հայերու լուսաւոր խորհրդով ու բարեմտութեամբ միութիւնը կրնայ մեծա-

մեծ գործերը ընել. վասն զի անկէ առաջա-
թիւ լուսաւորեալ անհատներէ բաղկացած
ազգերը կը տեսնենք, որ շատ յառաջ գնացած
են և շատ զօրաւոր: Այլեւ Հայ ազգը ջնջուե-
նար այսօր նոյներուն ըրածն ընել՝ յայտնի
կ'երեւայ թէ անոնց կամքն ու կարողութիւնը
չունի. և այս կամքն ալ այս կարողութիւնն
ալ անհնար է ստանալ առանց մտքերու լու-
սաւորութեան և առանց անհատական զո-
րութեանց ամփոփմանը: Ուրեմն պէտք է որ
Հայերուն մտքին խաւարը փարատի ուսմանց
և գիտութեանց լուսին ցայտելովը, անոնց
սիրտերը էռան ազգասիրութեան կրակով և
ընկերութեան ու միութեան մէջ միայն զո-
րութիւն գտնալուն համոզվելով՝ անոնց
կարողութիւնները միանան:

Ըն ասէն ահա կրնանք հաստատ և ա-
ներկմիա յուսալ թէ Ազգին բռնած ընթաց-
քը ապահով է, վրկտար է և կենդանարար:

Մենք չենք ղարմանար, երբ կը տեսնենք
կամ կը լսենք թէ քանի մը հարիւր անձինք
այսօր Ազգային պարտուց վճարման կը փու-
թան. վասն զի համոզված ենք թէ այնչափ
անձեր կը գըտնըվին ազգին մէջ, որ ազգա-
յին պարտքը բուն իրենց պարտքը ճանչնան:
Այլեւ այնչափն ալ չը գըտնըվէր՝ ալ յուսա-
հատութենէն պէտք էր որ մեռնէինք: Մենք
այնչափ չենք ուրախանար երբ Հայերը մէկ
միլիոնի չափ ազգային պարտք մը վճարելու
չեն դժուամակիր. այլ կատարելապէս ուրախ
ըլլանք, երբ տեսնենք թէ Հայերը Ազգա-
յին Կարգութեան հսկողութենանը ներքեւ
կարող են եղեր այս գումարին տասնապա-
տիկը Ազգային դրամագլուխ մը հայթայթել:

. . . . . .

Տեր Ներկինք, որ այն օրերը տեսնելով
մռնայինք այս օրերը և այն օրերուս մէջ
քաշած նեղութիւնները:

ԱԶԳԱՅԻՆ ԲԵՐԿՐԱՒԻ ԼՈՒՐԵՐ

Ուրախ սրտով կը ծանուցանենք թէ Կ.
Պոլսոյ մէջ գիշերօթիկ մեծ դպրոց մ' ու-
նենալու միաբան խորհուրդ ըրեր են մեր ազ-
գայինք և անոնք են անոր վերնութեանը ծախ-
քին հետ այն դպրոցին հաստատ եկամուտ
մը բերելու կարող գումարն ալ հաւաքել. և
մեծ յաջողութիւն գտնելով՝ անհատական մե-
ծերս դպրոցին ընծայած ըլլալուն ալ լուրը
տալու բաղդը կ'ունենանք:

— Նոյնպէս կը ծանուցանենք թէ Կ.
Պոլսոյ գաւառի մէջ ալ Պարսկաստան գըտ-
նըվող ամեն Հայագիներու փափաքը լեցընող
դպրոց մը բացվեր է տեղին առաջնորդ Ը-
ժանապատիւ Աբել Եպիսկոպոսի ջանքովն ու
յորդորանքով և այս մեծերս հիմնադիրն քն-
նութիւն մ' ընալով ամեն հանդիսականք գոհ
սրտով մեկներ են:

Այս երկու դպրոցները չեն մեղի բերկ-
րութիւն պատճառողները. այլ այն մտածու-
թիւնը թէ ուսմանց և գիտութեան օգուտը
մինչեւ այն կողմերու Հայոց ալ ղբտալի և փա-
փաքելի եղեր է և քիչ առնէն անոնց լոյսը
հան ալ պիտի ծաւալի. մեղի ուրախութիւն
կը պատճառէ նա մանաւանդ այն յոյսը թէ
պիտի տեսնենք քիչ առնէն այնչափ հեռա-
ւոր վայրերէ շատ մը Հայ սիրտեր եկած մի-
ացած մեր սիրտերուն, որով աւելի զօրացած
պիտի ըլլայ Ազգային կեդրոնական իշխանու-
թիւնը. վասն զի անշուշտ ազգասէր անձինք
միշտ մեծագոյն թըւով եղող ազգայնոց միա-
նալու պիտի փափաքին:

Այս. Յոյս ունինք թէ այնչափ հեռաւոր
վայրերէն, Հայաստանի հանդիպակաց ե-
ղերքներէն ալ շատ սիրտեր պիտի հրապուր-
վին ու գան մերձենան այս եղերքները բնա-
կող ազգայնոց հետ՝ Հայաստանն ամեն կող-
մէն գրկելու համար ձեռք ձեռքի տալով:

Մեր ուրախութիւնը տարապայման եղած
է նաեւ առավ թէ Վաղիմիր դպրոցին հիմ-
նամեայ աշակերտներն ալ արդէն մեր ազգա-
մուհքով կը անանին և մեր գաղափարներով
կը կրթըվին. որով օր մը հակառակ կարծիք-
ներ և տարբեր գաղափարներ չընդդիմանան
պիտի իրարու: Այն ձառը, զոր Աւսուհա-
րանին էն յառաջադէմ աշակերտը խօսած է
դպրոցին հիմնութեան օրը, մեղի կը ցուցընէ
առ ըսածնիս, ուստի հոս կը դնենք զանի:

Անծարգոյ Պարոններ.

Մեր բոլոր ուսման ժամանակը դուք ամենքդ
ձեր ծնողական պարտաւորութիւնը ճանաչելով ա-
մենքդ էլ ձեր կարողութիւնը չափ չնայելիք մեր
ուսման ամեն հարկաւորը որ մեր կենաց հասակի
հետ աճեցնէք մեր տհաս մանկական մտաց բարոյա-
կան զարգացումն էլ ուսման ու գաստիարակութեան
մէջ՝ որով ձեր անուան ու արժանաւորութեան հա-
մեմատ արժանաւոր զաւակներ ունենաք. որպէս զի
դուք մանաւորապէս քաղաքական կենաց արժանա-
ւորութիւն ունենալով, մեր Հայոց ազգի այս հին
ու վսեմ Ազգի ընդհանրապէս կորուսեալ արժանա-
ւորութիւնն էլ դանելու ջանք անէք: Եւ ո՛ր քաղաք,

ՙր աշխարհքում չենք տեսնել հիմայ ուր որ կան մեր Ազգի հաւուռածները, իրենց քաղաքական կնճռքին հետ Ազգի գրաւոր զարգացման կենացն էլ կենդանութիւն չՙեն տալ։ Դարձեննք անգամ մի աչքերնիս մեր ազգայնոց վրայ այն քաղաքների մէջ, և ահա՝ կը տեսնենք այս նպատակին հասնելու համար գպրոցները երկու կարգ զաւակաց համար էլ օր աւուր ուսման և լեզուագիտութեան մէջ յառաջադէմ կը փայլին, բարոյական կրթութեան մէջ մատաղահաս մանկունքն դաստիարակուելով կը զարգանան, ուսումն աւարտած տղայքն էլ քանի մի ազգաց լեզուների հանն առնելով, որը ընտրել է թարգմանութիւն լեզուաց, որը երեւելի առեւտրական ընկերութիւնների մէջ մտած, որ մէկն էլ այս Աստուածային ձրի շնորհաց փոխարէնը, որ իրանց ծնողաց շնորհիւն ստացել են, իրանց սիրելի Ազգին յետ գարձնելու գովելի պայմանին մէջն են։ Ւր այս ամէն նոցա չանքը ընդհանուր ազգի զարգացմանը համար յայտնի կը տեսնենք, որ նրանցից շատերը չէ թէ կարողութեամբ կը գործեն, այլ կարողութիւնը չըհասած տեղը եռանդնամբ սրտի և միաբանութեամբ հոգւոյ յառաջ կը տանեն։ Ւր արդարեւ եռանդով ու միաբանութեամբ յառաջ տարած գործը՝ կարողութիւնը ւչ երբէք ներգործել կարէ. շատ տեղ կարողութիւն հազած ժամանակը մարդկային կամքը հակառակ ներգործութեամբ ազգի և ժողովրդի օգուտ չըրնդունէն յետքը՝ շատ չարիքներ եւս պատճառ հազած է. բարի սրտերը միայն են, որ կարողութիւնը ըստ Աստուծոյ գործ դնելով, բարի նպատակ էլ յառաջ կը բերեն։

Աշխարհքս օրինակով յառաջ կՙերթայ միշտ. դուք էլ սիրելի ծնողք ձեր կարողութիւնը ու ձեր սրտի եռանդը մեր բարոյական զարգացման համար, մեր ուսման ու դաստիարակութեան համար գործ դրած ժամանակիդ մենք յառաջ կՙերթանք դեպ ՙի ազգային արժանաւորութիւնը գտնելու, դուք էլ երախտաւոր և առաքինի ծնողաց օրինակով կը փայլիք աշխարհիս վրայ, և այն ժամանակ կարողութիւն չՙեղած տեղը՝ ձեր եռանդը ձեր միաբանութիւնը Ազգի արժանաւորութիւնը գտնելու՝ կարողութենէն աւելի կը գործէ։

Տեսէք, քանի մի տարի յառաջ այս վարժարանն էլ չՙունէիք, բայց ձեր ազգութեան եռանդը միաբանութիւնը և կարողութիւնը մէկտեղ գալով Աստուած ձեզ մեզ յաւիտենական բարերար մի ուղարկեց, որ ձեր եռանդն ու կարողութիւնը գործի դնելով մեր մտաց լուսաւորութեան այն տունը կանգնեց ու գնաց. մի՛ համարիք թէ քանի մի անձինք հակառակ դուրս եկան ձեղմնից։ բարի գործը որ իրան հակառակորդ չի ունենայ, Հաստատուն ու մնայնաւոր էլ չի լինիլ. վարդը միշտ փուշերի միջին կՙաճի և հոտ կը տայ։ Հիմայ որ Աստուածային Նախախնամութիւնը մեր հոգեւոր բարերարը ձեր բարի սիրտը քննելով մեզ պարգեւել է, ձեր եռանդն ու միաբանութիւնը, և կարողութիւնն է, որով կը գործէ մեր Վերապատիւ Սրբազան Առաջնորդը, և մենք այս լուսաւորութեան և լեզուագիտութեան մէջ, որ ձեր իւրաքանչիւր արժանաւորութեանցը հաւասար որդիք լինելով, ընդհանուր Ազգիս արժանաւորութիւնն էլ գտնելու պիտանի անդամք լինիմք ժամանակին. մի տարակուսիք այս ձեր եռանդն ու սրտի ցանկութիւնն է, որ Աստուած էլ ձեր կարողութիւնը արդիւնաւորում բարերարների ձեռքով։ Ի կալային կանդնեց երկու ամուսնոց մէջ իր վարժարանը մեր Սրբազան բարերարի շնորհիւ, և բարեպաշտ ազգայնոց որոց մանաւորութեամբ, որոց անունքը պիտի հրատարակին Ազգային օրագիրք։ Ընդ այնպիսի ժամանակ բուսաւ բարձրացաւ, ծաղկեց ու ծլեց այս վարդը որ քանի մի անձանց նախանձու փշերը հաւասար բարձրացուց իր հետ, բայց հեղձուցանել չըկարաց նրան, որովհետեւ առաքինութիւնը ճաճլով ՙի ձախողակս անգամ, նախանձու փուշեն բարձրացաւ վարդը ու իր տերեւովը չըրաջցրնց նրան իր շուքի տակին. ուստի յոյս ունենք որ նրա մէջն էլ մեր եղբայրքը մեզի պէս մտնեն ուսման և լեզուագիտութեան շաւղին մէջ մեր բարի օրինակովը։

Ւր բարեպաշտ ծնողներ, դուք էլ որ այսօր մեր ուսման համար ձեր ամսական փոքրիկ տրօքը վարժարանի ծախսուցը մասնակից էք լինում, իմաց կայէք որ մեզի ժամանակին մեր Ազգի միութեան մարմնոյն պիտանի անդամներ էք պատրաստվում, իմաց կայէք որ դուք էլ ընդհանուր Հայոց հետ ազգային դաստիարակութեան շաւղին մէջ միատեղ էք գործում, իմաց կայէք որ մեր գերապարգեւ վարժապետաց չանքը, հոգողութիւնը, մեր դաստիարակութեան վրայ ձեր եռանդեան ձեր միաբանութիւնը և ձեր կարողութեանը կը համապատասխանեն. և այս ասածիս ստուգութիւնը և մեր ինամատեայ ուսման հարցաքննութիւնը ձեզի երաշխաւոր պիտի լինին հիմա։

Ասաց

2 Փետրուար 1861 ամի Դավթեժ։

Աշակերտ առաջին դասատան Նազար Յարութիւնեան։

Չՙենք կրնար երեւակայել առանց ուրախութեան արտասուքներ թափելու այն երջանիկ բազդը, առանձինն Պարսկաստանի Հայոց համար, և այն բարեբաստիկ ապագան, ընդհանուր Հայոց համար, զոր կը պատրաստեն այս ազգասիրութիւններով զեղուն սիրտերը, գիտութեանց լուսով. . . . . ։

Ուրեմն մանկենք ՙի բոլոր սրտէ մեր մեծ արեւնակիցներուն ազգային յառաջդիմու-

թեան համար ըրած ջանքերուն ու աշխատութեանդ յաջողութիւն և մաղթութիւնք մեր ընթերակալութեան հաւատոյքը, մանաւանդ Ազգանպատակ Աբաջնորդին, որ Երբոպային առած լրտը Հայաստանի մը կողմն որ գնաց ծաւալելու աշխատեցաւ ու ի՛նչ խաղ։

ԱՕԳՈՒՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ինչպէս տարի տակէ տակ մը առաջ էր, որ Ազգային Հիւանդանոցին ցաւալի նկարագրութիւնը ըրինք մեր ընթերցողաց. նոյն միջոցին էր նաեւ որ ուզեցի ճարտար գրիչ մը ուղարկել ճիշդ նկարագրութիւնն ըրած նոյն տեղին՝ ուսանձին տեսարակով մը։ Ընթերցողք մոռցած չեն ըլլար որ թէ մենք և թէ նոյն տեսարակին հեղինակը, կը խնդրեինք ընթերցողներէն այցելութեան երթալով այն տեղին՝ բազդատելու մեր գրածները հոն տեսածնուն հետ։

Ամենք ալ մեր խնդիրը ընդունած և ուսանձին նամակներով մեզի տեղեկութիւն տուած էին տակաւին մեր գրել չուզած կամ մոռցած պակասութեանց վրայ։ Իմ կ'ուզենք թէ մեր գրածներուն ճշդութեանը բուսա կանէն ուզել համոզված էին. այնուհետեւ նոյն առենի Ազգային ժողովը անվիճելապես քննիչ հոգաբարձուներ ընտրեց, որ առեն բան գային աչքովնին տեսան ու տեղեկագիր մը ընեցին. այս տեղեկագիրն ալ դարձեալ ինչքան պէտք էր վկայեց մեր գրածներուն ճշդութեանը։ Բայց ազգային խնամոցութիւնը նեղը վրայ գալով քննիչ հոգաբարձուները նոյն ազգային հաստատութեան վիճակը բոլորովին կարող չեղան ու Թողուցին մեկ քանի հին հոգաբարձուներու կարողութիւնը և խնճմանքին, մինչեւ որ այն ալեկոծ եալ օրերէն ետեւ խաղաղութեան առեն Առհմանագրականապէս կազմեալ Ազգային Վարչութիւնը ըստ օրինաց, Հիւանդանոցի նոր հոգաբարձութիւնն հաստատեց Տեսուչական խորհուրդին ձեռքով։ Այս հոգաբարձութիւնը, որ քանի մը ամիսէ ի վեր հիւանդանոցին բարեկարգութեանը ձեռք զարնած է, պիտի ըսենք թէ ուզելի շատ գործ տեսաւ որչափ կարելի էր նոյն ժամանակի մէջ և շատ նեղութիւն կրելով ստակի կողմանէ։

Այս խօսքը ըսինք և ահա շատ մը յարձակումներ պիտի կրենք հին հոգաբարձուներէ և անոնց խօսքին ունկնդիր դիւրահաւան անձերու կողմէ։

Այս օրերս Հիւանդանոց այցելութեան գացողները "հիւանդանոցը հիմայ Հիւանդանոց ըլլալ սկսեր է" կ'ըսեն. բայց պիտի բամբասվին և իրենց խօսքերը տուտ պիտի համբաւվին. ինչու որ հիւանդանոցն առջի Հիւանդանոցն ըլլալու էր, և իր առջի մարդերովին. և ան տեղը բարեկարգ եղած կ'ըլլար։ Շատերը այսօր կը բամբասեն Հիւանդանոցը, շատերը կը ղպպարտեն արդի հոգաբարձուները և այնպէս ցաւալի կը նկարագրեն այդ հաստատութեան վիճակը, որուն նմանը դեռ եղած չէ։ Դպրոցը գոյվեցաւ կ'ըսեն՝ մինչդեռ 200 ի չափ աշակերտով կան հոն. հիւանդներն ալեկ չեն նայվիր կ'ըսեն, մինչդեռ հինգ վարպետ և վկայական ունեցող բժիշկներ այցելու են անոնց. կերակուրներն ալեկ չեն կ'ըսեն ոմանք, մինչդեռ գուցէ իրենց տանը մէջ այնչափ ուշեղութիւն չեն վատներ։ Օրերուն և անկարողութեան համար իբրեւ ծանրութիւն մը կը նայվին հոն կ'ըսեն, մինչդեռ նոյն իսկ ազգին անկեղծները կը խոստովանին իրենց բերնով թէ այսպէս ալեկ օրեր տեսած չունէին հոն և կ'օրհնեն թէ արդի հոգաբարձուները և թէ Ազգը. Հայը սեւ է կ'ըսեն, մինչդեռ առջի պէս մթնոլորտ ու թիթեռած չէ, և հոգաբարձուք կը մտածեն բուն իսկ Հիւանդանոցին մէջ եփել հայը և Ազգին շահ մ' ընելու համար Պատրիարքարանին պէտք եղած հայն ալ անկէ հոգալ։ . . . . . :

Բայց առաքինները չեն ամէնքն ալ և չեն խղճալ իրենց ըրած պղպարտութենէն վրայ. վասն զի նպատակ մ' ունին և այն նպատակին հասնելու համար գործածած ամեն մեքենայութիւնները նուիրական է. անոնք կը փափաքին, որ ազգին մէջ ալեկ բան մը չկատարվի կամ իրենց ձեռքով կատարվի. ոմանք ալ կը փափաքին որ իրենց շահերը կատարվին։

Մենք այս դիտողութենէն մեր մարդոց ըսելիք մը չունինք. պատ են ուզածնուն չափ տուտեր բարդելու՝ միամիտ հասարակութեան սիրտը խաղցնելու համար. մենք միայն կը գրենք՝ անոնց իմացնելու թէ տուտ է ինչ որ կը խօսվի հիւանդանոցի համար իրենց պարտականք։ Չենք ըսեր թէ Հիւանդանոցը պակասութիւն մը չունի. ասի չեն կրնար ըսել նաեւ տեղին հոգաբարձուներն ալ. Հիւանդանոցը պակասութիւն մ' ունի այո և մեծ պակասութիւն մը. այն է ստակը։ Եթէ այս ալ հոգացվի պէտք եղածին չափ՝

այն ատեն պիտի տեսնէ Աղգը թէ ինչ է Ազգ ունենալ մը և ինչպես կը կառավարվի :

Աբգի բարեկարգութիւնները, թէև մեծ բան չ'երեւնան չաւերուն աչքին, պէտք է խոստովանինք, որ արդի հոգաբարձուաց աշխատութեան հակառակութեան յայտնի և անուրանալի ապացոյցներն են :

Մենք չենք պատասխաններ Իւանդանոցի մէջ անկարգութիւնները սեպհականող թէ չարամիտ և թէ միամիտ անձերուն, այլ կ'ուզենք սենք և մեզի հետ ապահով կը յորդորենք մեր ընթերցողներն ալ տակաւին մէկ երկու շաբաթ. որմէ ետքը Իւանդանոցի տեղեկագիր մը տպված հրատարակված սեռներով կը հրատարակենք մեր ընթերցողները, որ այն սեռակը ձեռքերնին երթան այս հաստատութեան ամեն կողմը պտըտին. և ան որ չտեսնէն անօրինված բարեկարգութիւնը՝ հոն բաղքեն :

Աբգեն հոգաբարձուք հրապարակաւ ծանուցած էին Մասիսի միջնորդութեամբ թէ ամէն որ պահանջութիւն մը սեռնէ Իւանդանոցին մէջ կը խնդրվի, որ նա աղքատասիրաբար արձանագրէ հիւանդանոցի մէկ սենեակը դրված այն սեռակին մէջ, որ յատկապէս ասոր համար հաստատված է : Իւանդատնոցին արդի բամբասողները ասի չ'են սեռներ. ուրեմն իրենց ըրածը թշնամութենէն աւելի արժէք մը չ'ունի : Իսկ անոնք որ պիտի երթան այսուհետեւ այցելելու և հոն սեռած պահանջութիւնին արձանագրելու՝ մեծ ծառայութիւն մը պիտի ընեն ազգին, և բարեկամութիւն՝ հոգաբարձուաց :

Ուրեմն ապահենք մէկ երկու շաբաթ ևս և այն ատեն ուրիշ առթով կը յայտնենք դառնալ վերատին դէպ 'ի այս խնդիրը :

ԹԷՔԻՐՏԱՂԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Ասոր բաղդիս . Անզուսին ձակատը այս տարի դառապարտված կ'երեւի ամեն տատն օրը անգամ մը եկեղեցականի մը եպերելի յանցանքը իր ընթերցողային հաղորդելու . . . Թշուառ վիճակ . . . :

Ով Տէր . երբ պիտի ազատես Հայ ազգը այս տեսակ անգութ բռնաւորներեն ձեռքէն, կամ երբ, յայտնէ մեզի, այսչափ դառերէ 'ի վեր Աղգը կեղեքելնուն վրայորէն պնդիսի յաջորդներ պիտի ունենան, որ մինչ Թարեն Աղգը, անոր ցաւը իրենց ցաւ ըզգան և անոր ցաւերն դարմանի հոգան՝ փոխանակ ցաւ ցաւի վրայ դնելու . . . . . :

Այսօր կը պարտաւորինք նոր մէկ անգլերէն թուղթիւնը պատմելու այն անձին, որուն վրայ տակաւին մեծ համարում ունինք շաւերը . և որուն պատրիարք ընտրվելուն համար երկու քառ մինաց վերջին անգամ պատրիարքի ընտրութեան ժամանակ . . . . . :

Թուղ տեսնէ՛ն անոր քառերարհուները իրենց ընտրել ուզած անձը և Թուղ բացվի աչքերնին . մեր նպատակը մէկ կողմէն անօրինը և Աղգին թշնամին խայտառակել է նէ՝ միւս կողմէն ալ՝ Աղգին իր ընտրած, գոված և երկինք բարձրացուցած անձերը ճանչցնել է, որպէս զի չը խաբվին :

Իսկ յանցանքը Թուղ ինք պատմէ նամակագիր մը, ներկայ ամենայն եղելութենէ :

" Աբգոյ Խմբագիր .

" Ատենէ մը 'ի վեր քաղաքիս մէջ Տէրութեան պաշտօնով գտնվող Պօլսեցի Ա'արակեան Ղուկաս Աղայի որդին Պ. Սերովբիկ Ա'արակեան տասնեւութ տարեկան պատանին այնպէս բամբասվեցաւ հոս՝ թէ այս տեղէ մէկ քանի անձանց վրայ հեգնական երգեր շիներ է . բամբասվեցաւ կ'ըսենք՝ վասն զի այն երգերուն շինողն ինք ըլլալը դեռ դատաստանական կերպով վճռըված չէ : Ասոր վրայ այն երգերուն ենթակայ եղող մէկ քանի անձինք կ'երթան առաջնորդին կը բողոքեն . ան ալ տղուն հայրը կը կանչէ և կը խնդրէ անկէ որ ներէ իր տղան հոն կանչելուս ու թեթեւ պատիժ մը տալու՝ առաւել այն բամբասված անձերուն սիրտը շահելու համար : Հայրը կը հաճի . Առաջնորդը՝ ալ դուն հոս մի կենար ըսելով զինքը կը ճամբէ : Տղան կը բերվի . Առաջնորդը նախ՝ " տրվոր վրայ նայեցէք՝ տասպանճա մասպանճա չըգտնըվի " կ'ըսէ ժամկոչներուն . կը նային բան մը չըկայ . մօտը կը կանչէ պատանին ու երկու ապտակ կը զարնէ անոր յանկարծ . տղան բողոքելու համար բերանը չը բացած՝ գետինը կը զարնեն զանի ու կ'սկսին ըէֆլէնեդրով ծեծել . տղան կը պօռայ, ախաղանը կը բերեն՝ կը պառկեցնեն տղան ու վեթմսուն ցուպ կը զարնեն ոտքերուն, յետոյ կ'արձակեն : Առաջնորդը պահպանիչ կ'ըսէ տղուն վրայ՝ ու մէկու մը կռնակը տալով տուն կը ղրկեն :

Տղան 22 օր հիւանդ պառկելէն ետքը՝ քանի մը օր առաջ Պօլիս կը ղրկեն, հոն վարպետ բժիշկներու ձեռքով դարմանվելու համար : Ինչ չըհաւատաք իմ խօսքիս՝ կրնաք երթալ Հասքեոյ ու ձեր աչքով տեսնել հոն իր տունը այդ պատանիին վրայ ըէֆլէներուն կապուտցած նշանները և ոտքերուն վրայ ապաղանի չուանները տեղը, որ միսերը կարըտած է : Տղան հոս եղած ատեն ապրելուն չոյս չըկար .

ջդիտեմ Հոդ ինչպես է :

Մ՚ներ Ա ռաջնորդին անհոգութեամբը՝ քաղաքիս հայերին մեկ քանին , ուրիշ քաղաքական յանցանք մ՚ալ դործած են ուրիշ կրօնքէ եղող անձերու դէմ. ասոր համար ալ կարծեմ դրված է Ր. Դուռը և անկէ անշուշտ Պատրիարքարանն ալ ։

1861 Մ՚արտ 25 * * *

Տեսնենք կրօնական ու Քաղաքական ժողովներն ինչ պիտի ընեն այս եղելութեան ։

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ

Նախընթաց Բը-ով ծանո-ցին՝ Հի-ւսիսափայլին հրատարակո-ւթեան ընդո-նակվելը . այս Բը-ով ո-ւրախ ենք ծանո-ցնելո- ւն Ա. Ւ-ը, Յո-ւնվար ամսո-ւն պետրվանը՝ հասած է Պօլիս . ո-ղորը կրնայ քաջինորդ գրվել անոր Ընդերցասիրաց Դրասենեակին Մ՚ծ նո ւխան , Ւ-ը 6 ։

Այս անգամ անոր մեջէն հետեւեալ յօդուածը ի՚օրինակին՝ հոս , յո-սալով որ հաճելի ի՚ւլայ մեր ընդերցողներուն . և հաճելի անով Լս , որ այս յօդուածը գրողը Պ. Մ. Մ. Մխանտրեանց այն պատուական անձն է , որ ընդերո-ւթեամբ Լօրս Մենկոֆին եվոք էր հոս ի հրատ Տ. Տ. Մաքլեոս Ա. Լոռոդիէոսին ։

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Վա՛յ այն աշխարհին որ կարող չէ քննադատի աչքով նայել իւր վերայ ։ Բայց և պէտք է ունենալ շատ սրտական սիրտ , շատ ճշմարտասիրութիւն , որ մի մարդ կարողանայ ա-մենքեան առաջև մերկացնել իւր վէրքը և ցաւերը , ծածկել ասրանց , հին տարիներուէն համարվեալ ազգային արժանա-պատուութիւն , մինչև անգամ ապացոյց հայրենասիրութեան , որ պէս թէ ուրիշներից ծածկել իւր պատանքը , ցուցանուէր լինել առաքինի ։ Ոչ մի աշխարհ ներելիած չէ այնպիսի անձ ազգերի վերաբերութեան և քննադատեան իւր որդիների կող մից , ինչպես Անգլիան . և Ըստուած տայ , որ ամեն մարդ ա-զնից այնպես սիրէր Ռուսաստանը ինչպես Անգլացին սիրուէր իւր Անգլիան ։ Բայց նա սիրում չէ մանաւանդ առնել իւր հայրենիքի պայծառ կողմերը . դորա ինքնին յայտնի են նորան . նորա ուշադրութիւնը դրաւում ամենից առաւել իւր հայրենիքի մեայր կողմերը . դոցա վերայ սիրուէմ նա դրել , խօսել , գոռալ բոլոր աշխարհի վերայ , որովհետև դորա վերաբերութիւն , տանջուէմն , հոգս են պատճառում նորան ։

Վ. Բոպին ։

Ամհաւատական ազգերի ըղձյիների մեջ առ-վուէմ շատ Թագաւորների մասին , Թէ նո-րա կամենալով տեղեկանալ իւրեանց հպատակների կարծիքին և սիրտքին , կերպարա-նախոհ եղած շրջուէմին նոցա մէջ և ականջ էին դնում նոցա համարձակ դատողութիւն-ներին իւրեանց կեանքի խնդիրների վերայ ։

Յոյնք և Հռոմայեցիք հրապարակների մեջ դատուէմին և վճռուէմին բոլոր հասա-րակաց գործերը ։ Իւրաքանչիւր քաղաքացի , որ վայելուէմը բոլոր իրաւունքները , բայց ոչ ծառան , ունէր իշխանութիւն ասել իւր կարծիքը , և այդպէս ամենայն նիւթ , ամե-նայն խնդիր որ պատկանուէմը ժողովրդի կեանքին կամ մի քաղաքի , ամենայն կողմից քննուէմին այն անձինքը որոնց օգտին կամ վնասին պատշաճուէմին գալ . որովհետև ոչ ուէելի լաւ կարող է իմանալ մի որոշեալ անձնի կամ հասարակութեան պիտոյքը , քան Թէ նոյն իսկ անձը կամ հասարակութիւնը , բայց ոչ մի այլ ոք ։

Որա համար , այսինքն , ամեն մի մտածելի նիւթ լիակատար , ընդհանուր , հրապարա-կական դատողութեան տակ ձգելու համար , բոլոր առաւելապէս և ճշմարիտ լուսաւո-ւեալ և քաղաքականապէս հասունացած ազ-գերի մէջ գտանվուէմ օրադրական մատենա-գրութիւն , գործիք հասարակաց կարծիքի , մի այնպիսի կարծիքի որ , եթէ միա դնենք առաւել շատ դիպուածներին , միայն է պա-տահում , որ սխալվի , երբ որ նա հրատարա-կուէմը նոցա պիտոյքը , հարկաւորութիւնքը , ցաւը և այլն և այլն . միայն Թէ այս կարծիքը հրատարակվուէմը ամենևին ազատաբար , չը լինելով ոչինչ նիւթական կամ քաղաքական ճնշողութեան տակ ։

Հին սովորութեան պաշտող մարդիկը , Թշնամիք յառաջադիմութեան և Թշնամիք ազգի , միշտ ընդդէմ են հրատարակախոսու-թեան ։ Նոցա խիղճը (միայն Թէ նոցա մէջ կար այդպիսի բան) բեռնաւորած է շատից դարուս շատ գարշելի և անառակ գործերով , քան Թէ կարող էին նոքա ապահով համարել իւրեանց անձը հրատարակախոսութեան ե-րեսից ։ Այս մարդիկ սեռանելով , Թէ ժա-մանակի հոսանքը յաղԹելով բոլոր դէմ դրած ամբարտաւանները (արգելքը ու խոչընդոտները) յառաջ է գնում , դիմուէմեն դէպ ի մի սրբազոլիզ կեղծաւորութիւն , երես են ցոյց տալիս , որպէս Թէ նոքա էլ հաւան էին ա-մենայն պատուելի և օգտակար բանի , և յա-ռաջադիմութեան գործին ։ Բայց ժողովրդի միտքը դարձեալ դէպ ի յետ քարշելու հա-մար , նոքա հանդէս են բերում այնպիսի խնդիրներ որ միայն կարող էին լուծանել դա-րաւոր ժամանակների աշխատութիւնք ։ Ան

գործեր որոնց մէջ խառնվում էին պատուելի մարդիկ. կան միաբանութիւնք որ ապակառնում են: Յաղվելդին անպատճառ պէտք է զգաստութեամբ և զգուշութեամբ աչք ածել այս, խառարի հոգիների վերայ, այս, հասարակութեան վատակների վերայ:

Սակայն յառաջադիմութիւնը ունի մի անընկճելի բնական զօրութիւն. զոր օրինակ հին սովորութիւնը ի զուր աշխատում էր մի քանի չեխ մնացած աշխարհներում ընդդիմանալ օգտակար գիւտերի ներքսածութեանը: Նոքա բոլոր ջանադրութիւնքը անօգուտ եղան: Գրատպութեան արուեստը, որին սկզբում առելութեամբ հանդիպեցան բոլոր թշնամիքը յառաջադիմութեան, այնու ամենայնիւ նոքա մնաւ ամենայն տեղ: Նոյն բանը պատահած է, երբ որ սկան պատրաստել երկաթուղիք, էլեքտրօ-մագնիսեան տելեգրաֆներ, մեքենայք և առհասարակ ամենայն բան, որի խորհուրդն է, նիւթապէս և բարոյապէս լաւագոյն կացուցանել հասարակութեան դրութիւնը: Այս, կարելի է, ինչքան կամիս, ներքօրձել ընդդէմ դոցա, անպայման արգելանքի տակ դնել դոցանց, կամ թէ ընդդէմ դոցա յարուցանել թիւր և մոլար կարծիքներ և մանաւանդ ախտեր. այո, կարելի է այդ գիւտերը մարդկային հանճարի ժողովել և փակել մի քանի մարդերի ձեռքում, որ դորա նով նաւաղեր նոցա օգտաբեր ազդեցութիւնը, — դոքա այնու ամենայնիւ այսօր էգուց պիտի յաղթող հանդիսանան: Ցմուռ է մեր հաւատը դէպ ի անընդդիմանալի զօրութիւնը յառաջադիմութեան. մեք հաւատում ենք և վիպասանենք սրտով, թէ ոչինչ հակառակներ գործութիւնք, ոչինչ զօրութիւնք կարող չեն դադարեցնել նորան, որովհետև դա է օրէնք հասարակաց մարդկութեան, նախայառիւեան և հիմնական օրէնք աշխարհասաստեղծութեան. նորա մէջ յայտնվում է Ստարչի կամքը, և այս պատճառով ամենեքեան որ չեն հականում այս օրէնքը, որ փակում են դորա ընթացքը, կանուխ արդէն մատնում են իրենց անձը գալոց օրերի խայտառակութեանը և անէծքին, այլև նոցա բոլորեցուն բերանից, որոնց յառաջադիմութիւնը արգելում էին իւրեանց ընդդէմ ներգործութեամբ:

Ամ պատուելի գործ է մտացող և կրթեալ դասերի կողմից, կենդանի պատուական ստուերագրութեամբք, ջոշափելի օրինակներով եւրոպական ազգերի պատմութենից և կեանքից ցուցանել իւրեանց ազգին այն ակնյայտնի օրէնքը բնութեան, որի մէջ յայտնվում մարդկային հանճարի յաղթութեան պարծանքը, որպէս Աստուածութեան նմանութիւն: Ընդդիմի գրուածքը պիտի նշանաւոր լինին լիապտուղ և ժամանակի պիտոյքին յարմարաւոր պարունակութեամբ, կենդանի և ժողովրդական խօսքի ոճով, առանց երեսպաշտութեան և երկիւղի հրատարակելով իւրեանց սրտի վկայութիւնքը: Այս հանդիսի մէջ, ուր գործ ունի մատենագրութիւնը, ուր տպագրութեամբ դուրս է եւ բևեռում այս կամ այն միտքը, ոչ ով քան չունի մատենագրի ոչ կոչման և ոչ անձնաւորութեան հետ: Եթէ մատենագրութեան մէջ թոյլ տայինք պատուապաշտութիւն, այնուհետև պիտոյ է նա գառնար քաղաքական գործերի կառավարութեան տուն: Որպէս արդարև անկեղծ խոստովանութիւնը իւր մեղքի թեթևացնում է մարդուս հոգին դէպ ի ընդունելութիւն երկնային շնորհի, նոյնպէս և հրապարակախօսութիւնը դէպ ի դուրս հանելով բոլոր պակասութիւնքը, դառնով ահա տալիս է հնարաւորութիւն բուժելու այդ ցաւերը, այդ խոցերը հասարակութեան. իսկ եթէ մի քանի անձինք վարակված են բորոտութեամբ, այնպէս, որ անբժշկելի էին, տպա հասարակութիւնը գոնեայ ուզեկանալու էր նոցա ամենակործան ցաւին, և փոխանակ հաղորդակցութիւն ունելու նոցա հետ, դուրս կը ձգէր նորանց իւր միջից: Ամ քոստ ոչնար ապահանում է բոլոր հասը (սիբուն). մի ինաստակար մարդ ճանապարհից հանում է հարիւրաւոր միւսեր: Եթէ մեք հալածում ենք մեր հօտերից և ջոկերից քոստ ձիեր և ոչխարներ, հեռացնում ենք մեզանից ախտաւորված կովեր, շուներ և այլն, ապա արդարև առաւել հարկաւոր էր մեզ հեռացնել մեզանից վնասակար մարդիկ, մարդիկ որ վտանգաւորութիւն են առնում իւրեանց ամբոխով և խղճմտանքով, և ամենայն բոպէ պատրաստ են իւրեանց անձնական, նիւթական շահի համար գառնալ գործիք միւսերի երկպառակութեան և կորստի: Ամ թէ փոքր կա՞ն այդպիսի մարդիկ: Ուստի հրապարակախօսութեան անկարելի է որ և իցէ յառաջադիմութիւն. ուր չկայ մի ազատ արտայայտութիւն կարծիքի, այն տեղ չկայ և յառաջադիմութիւն: Ընդհակառակն, որ պարծենում իւր քաղաքական կարգերով և կարողութեամբ, մատենագրութեան հրապարակախօսութեամբ հասել է իւր մեծութեանը: Եթէ այն տեղ որ և իցէ աթոռակալ համարձակվել է դուրս գալ իւր իշխանութեան

սահմանիկ կամ թէ վարվելէ որպիսի և իցէ ինքնագլուխ ընթացքով, այնուհետեւ միւս օրին խնդապէս հարիւրաւոր լուագիրք ամենայն ուրախ կը հրատարակէին նորա ապօրէն գործը և կը պահանջէին ոչ թէ միայն հեռացնել, այլև դատաստանով դատել նորան։

Ա՛նաստ հեղինակը։

ՅԱՅՏՆԱԲՈՒԹԻՒՆ

ԿԵՍԱՐԻՈՑ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՂ

ԵՒ ԱՄԵՆԱՄԵԾ ՄԱՍԻՆ

Մարտի 475 և Մինուտիի 64 Թուականն մէջ երեւցած խաբէական Բողոք մը՝ կը պարտաւորէ զմեզ, որ ներկայ յայտարարութեամբ՝ ճշմարտասիրաբար ըստ կարի բացատրենք Մեղուի 121, 123 և 124, և Մինուտիի 58, 60 և 61 Թուականն մէջ յօդուած, և ատ Բողոքին նիւթ եղած խնդիրը, որուն թէ և Ազգային վարչութիւնը կարօտութիւն չ'ունի, զի ատ մասին երեք տարիէ ի վեր ամեն կողմանէ իրեն հասած բազմաթիւ տեղեկութիւնները ուրիշ բացատրութեան կարօտութիւն չ'են ձգեր, բայց որովհետեւ ատ կերպով հասարակութեան ալ առջին դրուած է, հասարակութեան մէջէն մէկուն ալ սըխալ ներկայացուցուած խնդրոյ մը վրայ իր դատմանը մէջ չսխալելուն կարեւորութիւնը կը ճանաչեմք։

Յաւօք կ'ըսեմք, քանի մը ուրիշ տեղերու պէս, Կեսարիոյ մէջ ալ քանի մը չըյոդնող և շահախնդիր անձինք իրենց պարագայ և համոզոտ եղող խմբով մը, քանի մը ազգային գործոց վրայ բռնացած և իբր թէ իրենց անձանցը սեփհականած, ձեռքէ չը հանելու համար ամեն ջանք ի գործ կը դնեն, միշտ զանազան առիթներ և միջոցներ կը հնարեն, միշտ ժողովուրդը կ'զբաղեցունեն շարունակ խռովութեան մէջ և երկու մասի բաժնուած պահել կ'ուզեն, և ասոր յաջողելու անանկ անակնկունելի դիւտեր կը գտնեն, և անանկ անակնկալ ձեւեր կը բանեցունեն որ ամենէն ուշիմ կարծուած անձինք անդամ ատոնց խարէութեանցը յափշտակուելէն պէտք չէ ազատ կարծել. և անանկ՝ որ ամեն խռովութեան մէջ ալ զատնք կատարեալ սիրոյ և միաբանութեան բերելը անհնարին է եղած, զի ամեն խնդրոյ մէջ ալ յառաջ վարել ուզած արտաքին կերպարանքնին չէ բուն նպատակնին, այլ ներքին դիտում ունին։

Ատոնք խիստ շատ անգամ ճշմարտութիւնը խափանելու և ստութիւնը քալեցնելու համար չգործածած վարպետութիւն ու խարդախութիւն չ'են թողուր, որ են սուտ խօսիլ, ճշմարտութիւնն ուրանալ, առարկայ փոխել, շաղակրատել, մնծաբանել և այլն և այլն և այլն, որոնց մէկ ճշմարիտ և կատարեալ դաղափարը կրնայ համարուիլ ատ յիշեալ բոլորքնին, որուն տեսնեմք թէ ոչիտի կրնա՞նք արդիօք ապացուցանել ատ բաներնիս։

Զգինք անցածները։ Ընդհ. 1858 Թուականին Յակոբ Արքազանին Պատրիարքութեան օրը, կասարիոյ համար ամենախաղաղ ժամանակի մը մէջ, ուրուն մէջ խռովութեան հնարն անգամ չկար, դիր կ'երթայ Պատրիարքին Ընտրողին որ Ըսպիսկոպոսի մը պարտաւորութեանը համեմատ այսինչ պատճառին համար վանքին նկոյ քաղաք երթայ և ժամանակ մը ժողովուրդը քարոզ ու մխիթարէ։

Ընտրողը կը հնազանդի, բայց տեսը քաղաք երթալուն ատ քանի մը անձինքը կ'ընդդիմանան, անշուշտ իրենց տնտեսութեանը վրայ չ'ըլլայ համար տալու պարտաւորութեան խորհրդով, և ուսակ կ'ելլան Ընտրողին, ժողովրդեան և մինչեւ անգամ տէրութեան դէմ բռնանալով եկեղեցւոյն մէկը կը գրաւեն և միւս եկեղեցւոյ քահանաներէն ոմանք շատ բան զանազան համոզմամբ հոն կը փոխադրեն և Ընտրողը նորէն չճանչնալ կը հրատարակեն առանց որ և իցէ պատճառի (զի ատ խնդիրը 1849 էն մինչեւ 1855 վեց տարիի չափ միջոց յուզուելէն ետեւ երկար ու մանր քննութիւններով հասկրցուած ու լուծուած էր Ազգային Վարչութեան կողմէն, և ամեն կեսարացւոց կողմէն ալ դարձեալ առաջնորդ ընդունուած ու ճանչցուած իրեք տարիէ ի վեր. այդ մասին բնաւ յուզում մը չկար։

Ուստի ատոնց ատ յանկարծակի և ապստամբական ցոյցքը բոլոր Կեսարիոյ Տաճիկ, Յոյն, Հայ ժողովրդեան մահաբերներովը, Գայմագամին և Քաղաքական ժողովի մազապարտայովը և Օզդատի վաշային Թախսիրովը Դրան, և անկէ Դրան յանձնարարութեամբը և ուրիշ զանազան ուղղակի և երկկողմնակի դրութիւններով ալ Պատրիարքարանին կը ծանուցուի, և ասկէ անմիջապէս գրեր, կռնգահներ, հրամաններ կ'երթան, ամեն եկածներուն համար Կեդրոնական Վարչութեան որոշումները կը ծանուցուին, ժողովուրդը կը խաղաղի և միւս ապստամբ քահանայն մեծաւորին ընազանդութեան և իրեն եկեղեցւոյն մէջ պաշտօնը վարելու կը դիմէ, ու միայն Տ. Աարտիրոսը կը մնայ ու կը յամառի, որ իր մեծաւորին անընազանդելէն, իրեն յատկացեալ եկեղեցին ձգելէն, իր մեծաւորը յիշատակութենէ դադրեցնելէն, բանադրեալ վիճակի մէջ ի սրբագործութիւն մատչելէն, անիրաւ զօշաքաղութեամբ՝ փոխանակ սիրոյ առելութեան գործիք ըլլալէն, և եկեղեցւոյ մը վրայ յափշտակութեամբ ինքնագլուխ և հակառակ

ամօռ բռնանալէն զատ, ատոնց ամենը ձգել և իր Առաջնորդին ընազանդութեան և միայն իր եկեղեցւոյն մէջ պաշտօն վարելու համար ասկէ ղեկուցած Պատրիարքական գիր, կոնդակ, հրաման, վճիռ, որոշում, ատոնց ամենն ալ ոտքի տակ առած կը շարունակէ իր ապստամբ ընթացքին մէջ մինչև ցայսօր։

Ընհարհական անձանց խնդիրը Ազգային Վարչութիւնը՝ ի հարկէ քաղաքականապէս կը լուծէ ուշ կամ կանուխ, և կամ մօտերս Ընտուծով Ազգային Ներմանագրութիւնը՝ կիսարիոյ մէջ ալ՝ ի գործ դրուելովը, յաւիտենական վճռով կը լուծուի. բայց Տ. Մարտիրոսին խնդիրը միշտ հարկ էր Կրօնական ժողովին օր մը յառաջ Կրօնականապէս լուծել և ալ չերկարել. վասն որոյ ան ալ վերջին անգամ այդ մասին իր վճիռը առաւ օրինաւորապէս և Մասիսի մէջ ալ հրատարակուեցաւ։

Ինչ քանի մը անձինք՝ որ Միւնասիին մէջ «Յակոբ եպիսկոպոսուն Առաջնորդութենա գալը ըզդրդը իտեն Գայաերի Հայերը» ստորագրութիւն դրած են, Կրօնական ժողովոյ վճռոյն պատասխանելով, Մասիսի և Միւնասիի միջոցով, իրենց սովորական խորամանկութեամբը գուցէ հասարակութիւնը խաբել կարծելով, ինչպէս Մասիսն ալ ըսած է, ոչ միայն Կրօնական ժողովոյ որոշմանը հետ եղող պարագաները բոլորովին ո՛րիւ ներկով կը ներկայացնեն, այլ և դասին կերպարանքը կը փոխեն և այնպէս Կրօնական ժողովոյն այդ վճիռը կամ որոշումը ապօրինաւորի կը հրատարակեն։

Տեսնենք թէ ինչպէս։

Կրօնական ժողովոյն վճիռը կ՚ըսէ, «Կիսարիոյ քաղաքի ապստամբած քահանաներէն . . . . մինակ Տ. Մարտիրոսը՝ իւր յառաջ քան զարձակիին ի բանադրանաց բռնած ընթացքին և ոչ մէկ կէտէն երբեք ետ կեցած չըլլալուն, այն ատեն նախկին Սրբազան Պատրիարքը որոշած է Թոմարզայի վանքը երթալ, և առանց քահանայագործութեան առ ժամանակ մի ապաշխարել, և իւր ապագայ ուղղիղ ընթացիքը վրայով հաստատուն ապահովութիւն տալէն զկնի արժանանալ քահանայագործութեան։ Այս որոշումը մինչեւ հիմա ի գործ չէ դրուած, և նոյնը (այսինքն Տ. Մարտիրոսը) տակաւին իւր ապստամբութեանը մէջ յարատեւած ու կեցած ըլլալը նոր նամակներէ իմանալով, առայժմ զկնդաղաբար վարուելով վերստին, առաջին որոշման գործադրութիւնը (այսինքն Թոմարզա երթալ ու առանց քահանայագործութեան ապաշխարելը) բաւական համարեցմունք մը սեպուեցաւ, յուսալով որ ատանկով այս մեծ գործը վախճան կ՚առնու. բայց թէ որ այս անգամ ալ առաջնոյն պէս ընդդիմութիւն մը ըլլայ այս որոշմանը (ի հարկէ իր կամ ուրիշներու կողմէն), հարկ կ՚ըլլայ ուրիշ ձանր միջոց ձեռք առնուլ և արգահրութիւնը ոտնակոխ չընել»։

Այս որոշման ապօրինաւորութիւնը և սուտ ու ախալ ըլլալը հաստատել ուզողները կ՚ըսեն Մասիսի և Միւնասիի մէջ իրարմէ քիչ տարբերութեամբ, որ մէկուն պակասը միւսէն լեցնելով ահաւասիկ,

«Կրօնական ժողովին որոշմանը նայելով, նախկին Պատրիարք Գէորգ Սրբազանը՝ Տ. Մարտիրոսին գրեր է (սիլա մուհաբէմէ) որ Թոմարզա երթայ և հոն առ ժամանակ մը ապաշխարէ. բայց յիշեալ քահանայն չէ հնազանդեր. ասոր համար Կրօնական ժողովը նոյն որոշման գործադրութիւնը առ այժմ զկնդաղաբար վճռեր է . . . . .»։

«(Մարսաւիելի սէհիֆիյաթ . . . . .)»։

«Կրօնական ժողովին այս խօսքը (թէ որ ձեր լրագրին մէջ հրատարակուած յօդուածը ճիշդ է նէ) սխալ է (ճշմարտութիւնը պիտի ազիմ սէհիֆիյաթ տըը). վասն զի Տ. Մարտիրոսին Թոմարզա երթալուն վերաբերեալ ոչ որոշում՝ լուսած է Գէորգ Սրբազանին օրովը և ոչ այնպիսի հրաման մը դասած է յիշեալ քահանային»։

Ընհա հոս յայտնի կը տեսնուի որ Կրօնական ժողովին յայտարարութեանը և բողոք ընդուներուն հասկացողութեան խօսքերը իրարու բացարձակապէս կը հակառակին. և իրօք բողոք ընդուներուն չհասկըցաւ՞ն յառաջ եկած է. ոչ, անշուշտ խորամանկութիւննէն։

Կրօնական ժողովոյն յայտարարութեան բնական միտքը սա է որ, Տ. Մարտիրոս իր կանոնական անընազանդութիւններէն և ապստամբ վարմունքէն ետ կենալ, երթալ իր առաջնորդին ընազանդիլ և իր յատկացեալ եկեղեցին դառնալու գիրեր է դրուեր, և Տ. Մարտիրոսը առանց չընդունելէն զատ՝ Ազգային Սիդրոնական կառավարութեան դէմ ալ անընազանդութեան մէջ է գտնուէր զանազան անգամ զանազան պարագաներու մէջ, անոր համար Ազգային Սիդրոնական կառավարութիւնն ալ վճռեր է նախկին Պատրիարքին օրովը որ Թոմարզայի վանքը երթայ. և այս վճիռն ալ պատրիարքական փոփոխութեանց համար կամ ուրիշ մանաւանդ պատճառներով մինչեւ ցայսօր անգործադրելի է մնացեր և Տ. Մարտիրոսն ալ նոյն ընթացքին մէջ մինչեւ ցայսօր կը շարունակէ եղեր, վասն որոյ Կրօնական ժողովն ալ առանց աւելի ծանրագոյն վճիռ մը տալու, որուն անշուշտ արժանի է այսչափ միջոցի մէջ գեռ դարձի եկած չըլլալուն և բարեկարգութեան չդիմելուն համար, որոշեր է զկնդաղաբար առայժմ նոյն առջի անգործադրելի մնացած վճիռը գործադրել, աւելի ծանրագոյնը՝ ըսուած մի արասցէ աւելի ծանր անընազանդութիւններու պահելով։

Ասանկ խնդիրներու միջամուխ ըլլալու եկող մէկ մը՝ Կրօնական ժողովոյն յիշեալ յայտարարութենէն կրնայ ասկէց տարբեր միտք մը հասկնալ. բայց ա՛ստոնք կը հասկնան, վասն զի իրենց նպատակին պիտի ծառայեցնեն (՛)։

Կրօնական ժողովոյն այս յայտարարութեանը դէմ բողոքող կամ անոր պատճառ, ատոր և սխալ ըսելու համարձակող մէկ մը, պէտք էր անոր բնականը մտացը համեմատ ըսեր, թէ Տ. Աթոռիրոսը իր բանադրանքէ լուծմանէն առաջ ունեցած ընթացքին մէջ չի շարունակեր, թէ պատասխանատու է, թէ Ազգային Առաջնորդէն կատարեալ թողութիւն ստացած է, թէ իր եկեղեցին վերադարձած է, թէ Կեդրոնական Վարչութեան բոլոր հրամաններուն ենթադրուած է, թէ վոխանակ սիրոյ՝ ատելութեան գործիք մնանանդ թէ առաջնորդ ըլլալէ դադրած է, թէ վերջապէս յանցաւոր եկեղեցականի մը արդարանալուն ամէն պէտք եղած միջոցները՝ ի գործ դրած է, և ոչ ուրիշ բան. և այն ժամանակը միայն յանդգնիլ գտնէ, Կրօնական ժողովոյ վճռոյն պատճառ, ատոր և սխալ ըսել։

Հայց մեր պարոններն ինչ կ'ըսեն ատ ցուցնելու համար։

Կ'ըսեն թէ "Տ. Աթոռիրոսին յօժարակամ երթալուն վերաբերեալ որոշում մը եղած և հրաման մը գացած չէ յիշեալ քահանային Գէորգ Աբգարեանին օրը"։

Որոշում մը եղած ըլլալը կամ չ'ըլլալը գիտցած չեն կրնար ըլլալ. վասն զի ըստ ասութեան Կրօնական ժողովոյն՝ մինչեւ հիմա դուրս չելած և անգործադրելի մնացած է. իսկ այդպիսի հրաման մը գացած չէ ըսելնին այն ժամանակը պատճառ-որ-ին-ը կը հաստատէր յիշեալ յայտարարութեանը, երբ ատոր մէջը գտնուէր թէ, այդպիսի հրաման մը գացած է յօժարակամ երթալու։

Ընդ՝ Կրօնական ժողովոյն յիշեալ քահանայն յօժարակամ ղրկելու որոշումը գործադրելու մի միայն, յիշեալ քահանային իր մեծաւորին և Կեդրոնական կառավարութեան դէմ ապստամբելն, անհնազանդելն և մինչեւ ցայսօր այնպէս յամառելն է և ոչ ուրիշ բան։

Այսպէս վարպետութեամբ ատ բողոքը դրողները Կրօնական ժողովոյն խօսքը ուրիշ խօսքի փոխել, և այն վերջած խօսքին պատճառ, ատոր, սխալ և ճշմարտագիր պիր ալմ սէհֆիյէլ ըլլալը հաստատելեն ետեւ (որով իրենք ալ ստուգած կ'ենթադրուին), Կրօնական ժողովոյն ալ դէմ խօսած չեն ըլլար, վասն զի իրենց ջրած ատոր կամ սխալը կամ սէհֆիյէլը՝ Կրօնական ժողովոյն յայտարարութեանը մէջ տեղ չունի), առաջնորդի խնդիրը յառաջ կը գնայ և Աթոսի ըսածին պէս գոփան կերպարանքը կը գծենք։

Առաջնորդի խնդիրն ուրիշ է, Տ. Աթոռիրոսի խնդիրն ուրիշ։

Առաջնորդի խնդիրը 1849 են մինչեւ 1855 դրեթէ վեց տարի քշեցին. անիրաւութիւնին հասկցուեցաւ, ուստի և Առաջնորդը նորէն հաստատուեցաւ 1855 ին, և մինչեւ 1858 լռութեամբ գնաց և մարդ բան մը ըսած չունէր առաջնորդին համար, և նոյն ինքն Տ. Աթոռիրոս ալ մինչեւ 1858 թուականը՝ Առաջնորդին հետ սիրոյ և համակրութեան մէջ էր։ Ենթէ նոյնչափ միջոցի մէջ Առաջնորդին դէմ նոր ըսելիքներ ունեցած էին, կրնային ըսել Ազգային կառավարութեանը՝ ինչպէս առաջները ըսին, առանց պատասխանատու ցոյց քերու, կամ եթէ ունին նէ ըսելիք՝ նոյնը այսօր ալ կրնան ըսել, ատոր համար ոչ ոք կրնայ զերծնք բռնադատել։

Հայց Տ. Աթոռիրոսի գործը բնաւ յարաբերութիւն չունի իրենց Առաջնորդին դէմ ընելիք ամբաստանութեանը. զի Տ. Աթոռիրոսը որ կողմը դառնայ՝ դատապարտելի է, ոչ միայն անոր իրաւասութիւնը ժխտած ըլլալուն, չհիշելուն, եկեղեցին առանց հրամանի փոխելուն, սրբապղծութիւն ընելուն և այլն և այլն համար է, այլ և Պատրիարքարանէն գրուած նամակները, հրամանները չընդունելուն, Պատրիարքին կոնդակը չընդունելուն և եկեղեցւոյն մէջ չկարդալուն համար. ոչ միայն իրեւ եկեղեցական պաշտօնեայ մը խորհելով, այլ և եթէ աշխարհական պաշտօնեայ մ'ալ ըլլար։ Տէր Աթոռիրոսը եթէ իր վեհապետին հետ դատ ունէր, ալ բան չունէր նոյն վէճակի որ և իցէ եկեղեցւոյ մը մէջ, մինչեւ դատը տեսնէր. պէտք էր Կեդրոնական կառավարութեան դիմէր ու դատը տեսնել տար և ոչ թէ ինքնագլուխ առանձին եկեղեցւոյ մը վրայ բռնանար, որ իր փաստը կը տկարացնէ, և այդ իսկ մի միայն դատապարտութեան տակ կը ձգէ զինքը։

Ու այսպէս բողոք ընողներն ալ պէտք չէ առաջնորդի անզգոյն խնդիրը մը մէջ քշելով Աթոսի ըսածին պէս գոփը գոփելը եղլեն. առաջնորդի խնդիրը եր ուրիշ տարուան խաղաղած էր երբ 1858 ի ապստամբութեան և Տ. Աթոռիրոսի խնդիրը եղաւ. ալ կարծեմ հին խորամանկութիւններ օգուտ չեն ըներ Ազգին այս նոր՝ աչալուրջ կառավարութեանցը մէջ։

Կը խնդրենք Պ՝իւնատին ալ անկողմնասիրութեամբ այս յօդուածներուս տառերէնը թարգմանել իր օրագրին մէջ, ինչպէս հրատարակած է միւս բողոքը։

Կեսարիոյ Բոլոր Հոգեվերեան
Բարեկարգութեան պերող և ամենայն հասին կողմեն
Կոստանդնուպոլիս Գիտութեան Բոլոր Կեսարիոյ
ամենայն գործոց տասր։

ԽՄԲԱԳԻՐ=ՏՆՕՐԷՆ
Ց. Գ. ՍԸՎԱՃԵԱՆ

Ի ԳԱԼԱԹԱ. Կ. ՊՕԼՍՈՑ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ
ՀՍՏՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՓՈՂՈՑ ԹԻ 17